



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

9 դեկտեմբերի 2011 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/4-Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 41 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Կ. Արեյանը, Վ. Առաքելյանը, Վ. Վարդանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Մակարյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Սարգսյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է. Ներսիսյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը, մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը, կոմունալ տնտեսության վարչության պետի ժ/պ Ա. Աբրահամյանը, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի ժ/պ Ի. Խաչատրյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևան համայնքի սեփականություն համարվող 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 629.43 քմ մակերեսով հողամասն անհատույց օտարելու և 31.33 քմ մակերեսով հողամասն ու 27.9 քմ մակերեսով շինությունն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

2. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

3. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

4. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.22 շենքի հ.61 բնակարանը նվիրելու մասին:

5. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

6. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ:

7. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին:

8. Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

9. Առողիտորական ծառայություն ներգրավելու մասին:

10. Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 2-ի N6218-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

11. Գույք ընդունելու մասին:

12. «Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

13. Երևանի «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

14. Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 14-ի N5561-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

15. Երևանի զարգացման 2012 թվականի ծրագրի հաստատման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 629.43 քմ մակերեսով հողամասն անհատույց օտարելու և 31.33 քմ մակերեսով հողամասն ու 27.9 քմ մակերեսով շինությունն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Օտյան փողոցի հ.66 հասցեում գտնվող՝ 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 629.43քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Պերճուհի Բոգուկյանին, Օվսաննա Բոգակյանին, Մարուսյա Մկրտչյանին, Արմեն Գասպարյանին, Արսեն Գասպարյանին, Հակոբ Աթիկյանին, Նարինե Միլիտոնյանին, Աննա Աթիկյանին, Լիլիթ Աթիկյանին, Խաչեր Աթիկյանին, Նշան Աթիկյանին, Սրբուհի Մաթևոսյանին, Հովհաննես Աթիկյանին, Մարիամ Աթիկյանին, Ալեքս Աթիկյանին, իսկ 31.33քմ մակերեսով հողամասը և 27.9 քմ մակերեսով շինությունը տրամադրել անհատույց օգտագործման իրավունքով (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.10.2011թ. հ2678388 վկայական):

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.14 շենքի հ.14՝ 52.7քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.02.2011թ. հ.2653210 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լուսինե Սերգեյի Բարանովային, Սերգեյ Կոնստանտինի Բարանովին և Եվգենյա Կոնստանտինի Բարանովային:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Չելսովի փողոցի հ.34 շենքի հ.37/1՝ 20.8քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 12.10.2011թ. հ.2833010 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ալբերտ, Գրիգորի, Սոֆյա Ստեփանյաններին, Ժանետա Առաքելյանին և Ալլա Թերզյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.22 շենքի հ.61 բնակարանը նվիրելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Դավթաշեն 2-րդ թաղամաս հ.22 շենքի հ.61՝ 19.0 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 16.06.2011թ. հ.2652217 վկայական) նվիրել Խաչիկ Քոչարյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Քանաքեռի 14-րդ փողոցի հ.38 շենքի 7-րդ հարկի հ.33 մեկսենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.09.2009թ. հ.2584303 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հրայր Հակոբյանին, Արուս Մկրտչյանին, Մարիամ Հակոբյանին և Արման Հակոբյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 41
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՄԵՑԻՆ-Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշմանը համապատասխան.

2) հողամասերը հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում մեկնարկային գինը որոշվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Համաձայնություն տալու մասին» N11-Ա որոշմամբ.

3) ինքնակամ կառույցների օգտագործման տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին» N12-Ա որոշման, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմանը համապատասխան.

4) քանդման ենթակա վթարային բնակելի տների եւ հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու և Երևանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» N23-Ա և «Երևան համայնքի վարչական տարածքում քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու և Երևանի քաղաքապետին իրավասություններ վերապահելու մասին» N24-Ա որոշումների, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N682 որոշումներին համապատասխան.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՄԵՑԻՆ - «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Ստեղծել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերություն:

2. Սահմանել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1 000 000 դրամ, որը համապատասխանում է 100 հասարակ բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 10 000 դրամ անվանական արժեքով:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության պետական գրանցումը և ընկերության հիմնադրի՝ օրենքով սահմանված մյուս լիազորությունների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ -1. Սահմանել Երևանի քաղաքային համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2012 թվականի հետևյալ դրույքաչափերը.

1) կենցաղային աղբի համար բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 ՀՀ դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական 2500 ՀՀ դրամ,

2. Երևան քաղաքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի 2012 թվականի դրույքաչափը սահմանել 500 դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ - Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գնման հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգով գնում կատարելու ձևով ձեռք բերել աուդիտորական ծառայություն՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ - Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 2-ի N6218-Ս որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արա Մինասյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 27-ի N2121-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N6218-Ս որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11.ԼՍԵՑԻՆ - Գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի Ժ/պ Ի. Խաչատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղից որպես նվիրաբերություն և նվիրատվություն ընդունել գույք՝ համաձայն հ. 1 և հ. 2 հավելվածների /կցվում է/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ - «Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը:

ՈՐՈՇՎԵՑ-1. Հաստատել՝

1/«Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը / հավելված հ.1/:

2/«Երևան քաղաքի պատմության թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը և հաստիքացուցակը /հավելված հ.2/:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթների և ձևակերպումների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 40
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց միաձայն

12. ԼՍԵՑԻՆ - Երևանի «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լևոն Իգիթյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը /հավելված/:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթների և ձևակերպումների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

13. ԼՍԵՑԻՆ-Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 14-ի N5561-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ -Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի ժ/պ Ա.Աբրահամյանը:

ՈՐՈՇՎԵՑ - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 14-ի «Դավթաշենի բնակֆոնդ և կոմունալ տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության՝ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին» N5561-Ա որոշմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

15.ԼՍԵՑԻՆ - Երևանի զարգացման 2012 թվականի ծրագրի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պողոս Փլավյանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը և առաջարկեց ներկայացվող ծրագիրը վերանայել ևս մեկ անգամ և ներկայացնել ավագանու քննարկմանը 2012 թվականի առաջին կիսամյակում:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան քաղաքի զարգացման 2012 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի զարգացման 2012 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ –41
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը